

«ՎԵՐԱԴԱՐՁԱԾՆԵՐԻ ՍԵՐՆԴԻ» ԽՆԴԻՐԸ ՎՈՒՖՁԱՆԳ ԲՈՐԽԵՐՏԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Երկրորդ Համաշխարհային պատերազմից հետո Գերմանիայում գրական ասպարեզ մտած երիտասարդ գրողների հետ մեկտեղ, որոնցից շատերը միավորվեցին «47-ի խմբում», երկրում շարունակում էին ստեղծագործել ավագ սերնդի այնպիսի անվանի գրողներ, ինչպիսիք են Գոթֆրիդ Բենը, Գյունթեր Վայզեմբորներ, Էռնստ Յունգերը, Հերման Կազակը, Հանս Հենի Յանը, Էրիխ Լոուսկը: Եթե վերջիններիս անվանում էին «ներքին արտագաղթի» գրողներ, ապա գրական նոր սերնդին, որի հիմնադիրը հանդիսացավ Վոլֆգանգ Բորխերտը, ընդունված է անվանել «վերադարձածների սերունդ»: Այդ սերունդի ներկայացուցիչների՝ Հանս Վերներ Ռիխտերի, Հայնրիխ Բյուլի, Ալֆրեդ Անդերշի, Էռնստ Հնարելի, Փաուլ Հայյուլի համար Բորխերտի ստեղծագործությունը և՛ ողբերգական խորհուրդ ստացած ճակատագիրը ձեռք բերեցին հետագայում ծրագրային նշանակություն: Նա մահացավ «47-ի խմբի» ստեղծումից երկու ամիս անց՝ 1947թ. նոյեմբերի վերջին, սակայն նրա անունը դարձավ դրոշմ նոր սերնդի գրողների համար, ովքեր իրենց համարում էին Բորխերտի գրական ու գաղափարական ժառանգորդները:

Ինչպես և Հանս Վերներ Ռիխտերը, Վոլֆգանգ Բորխերտը (1921-1947) պատերազմի ավարտը դիմավորեց ամերիկյան ռազմագերիների ճամբարում: Վերադարձից կարճ ժամանակ անց, Բորխերտը դարձավ գերմանական նոր գրականության հիմնադիրներից մեկը:

Վ.Բորխերտը ծնվել է Գերմանիայի Համբուրգ քաղաքում: Վաղ հասակից սկսել է իր առաջին գրական փորձերը, որոնք ընդհատվեցին պատերազմով: Ռազմաճակատում Բորխերտը ծանր հրազենային վնասվածք է ստանում: Սակայն բուժվելուց հետո նրան ոչ թե ռազմաճակատ են ուղարկում, այլ ձերբակալում են ու տեղափոխում Նյուրնբերգի բանտ: Պատճառը՝ Վ.Բորխերտի գրած նամակներն էին, որոնք՝ մինչ հասցեատիրոջը հասնելը, ընթերցել էին ռազմական գրաքննության ներկայացուցիչները և դրանցում հայտնաբերել հակապատերազմական-հակաճաշատական արտահայտություններ: Չնայած զինվորական դատարանը ապագա գրողին դատապարտում է մահապատժի, շաբաթներ անց նրան ներում են շնորհում և կրկին ուղարկում Արևելյան ռազմաճակատ, որտեղ նա արդեն ծառայում է պատժագումարտակում: Կարճ

Ժամանակ անց զինվորական բժիշկները Վ.Բորխերտին ճանաչում են շարային ծառայությանը ոչ պիտանի, ինչը հետևանքն էր ծանր վնասվածքի, ինչպես նաև դեղմախտի ու դիֆտերիայի, որոնք քայքայել էին նրա առողջությունը: 1943 թվականի վերջում զինվորական հրամանատարությունը որոշում է նրան ուղարկել ռազմաճակատային թատրոն, որպես դերասան: Բայց Բորխերտին վիճակված չէր խաղալ թատրոնում. ինչ-որ մեկը մատնում է, որ հանպատրաստի ներկայացման ժամանակ նա ծաղրանմանակել է Գերեխին և պատմել անեկդոտներ, նպատակ հետապնդելով «թուլացնել վերմախտի (գերմանական բանակի – Վ.Ս.) մարտական ոգին»:¹

Ղրան հետևում է երկարաժամկետ կալանքը, որը Վ.Բորխերտը անց է կացնում Բեռլինում, Սոաբիտյան բանտում: 1945 թվականի գարնանը ապագա գրողը՝ նացիստական վերջին պահեստայինների հետ մեկտեղ, ուղարկվում է Արևմտյան ռազմաճակատ, ընկնում գերի, բայց կարճ ժամանակ անց ազատվում, այն փաստաթղթերի հիման վրա, որ նա նացիզմի օրոք ենթարկվել է քաղաքական հետապնդումների: Ամբուժելի հիվանդությամբ տառապող Բորխերտը վերադառնում է Զամբուրգ:

Ղեռ 1938 թվականին Բորխերտը գրում է իր առաջին բանաստեղծությունները, որոնք լույս են տեսնում համբուրգյան թերթերում: Ինչպես Զ.Վ. Ռիխտերը, Բորխերտը ևս աշխատել է որպես գրավաճառի օգնական, 1940 թվականին, Բայզեն ընկերությունում:

Ղատերագծից հետո, վերադառնալով Զամբուրգ, Վ.Բորխերտը որոշում է շարունակել իր սիրած աշխատանքը թատրոնում:

Բայց ամիսներ անց Բորխերտը ստիպված էր հրաժարվել իր աշխատանքից՝ առողջական վիճակի վատթարացման պատճառով նա զամվում է մահճակալին: Այս պահից սկսած Բորխերտը՝ պայքարելով մահվան դեմ, սկսում է իր բուռն գրական գործունեությունը, հաղթահարելով հետպատերազմական Գերմանիայի համատարած սովն ու ցուրտը:

Բորխերտի հիմնական ստեղծագործությունը «Փողոցում, փակ դռան առջև» պիեսն է, որը գրվել է 1947 թվականի հունվարյան ութ օրերի ընթացքում: Արդեն մեկ ամիս անց պիեսի մշակված տարբերակը, որպես ռադիոպիես, հնչեցվում է գերմանական ռադիոյով: Այս մասին գերմանացի քննադատներից մեկը գրում է. «Ողջ ժողովրդի կյանքը սկսվեց ճիշից, որը լսվեց 1947 թվականի

¹ P.Röhmke, Wolfgang Borchert in Selbstzeugnissen und Bilddokumenten. Reinbek bei Hamburg, 1961

փետրվարի 17-ին բարձրախոսներից»:²

Բորխերտը գրում է իր սերունդի անունից, որը պատերազմի արդյունքում դարձել է հոգեպես ու ֆիզիկապես հաշմանդամ և կատարվածի մեջ մեղադրում է նացիոնալ-սոցիալիստներին ու բարձրաստիճան գինվորական հանցագործներին:

Մինչ Բորխերտը նգրեր իր «Փողոցում, փակ դռան առջև» պիեսը, հետպատերազմյան Արևմտյան Գերմանիայում փորձեր էին արվում ինչ-որ կերպ արդարացնել պատերազմում կրած պարտությունը, գտնել դրա պատճառները: Միաժամանակ գրվում էին ցածրարժեք վեպեր, որոնցում հնչեցվում էին քողարկված ռևանշիստական կոչեր:

«Փողոցում, փակ դռան առջև» պիեսը գրելիս Վ.Բորխերտը ուներ ոչ վաղ անցյալի ողբերգության վերաբերյալ իր ուրույն ու կայուն տեսակետը, քաղաքական-բարոյական հայեցակարգը. նա մերժում և քննադատում է այն արժեզուրկ ու չնչին պատճառաբանությունները, որոնք ներկայացնում են իր ժամանակակից քաղաքական մեկնաբաններից ոմանք, պարտության պատճառները փնտրելով միմիայն ռազմական սխալների մեջ:

1947-1948 թվականին գերմանական գրականության ու արվեստի մեջ ձևավորվեց Վ.Բորխերտի ստեղծագործություններին գաղափարա-գեղարվեստական առումով շատ մոտ ուղղություն: Նշված տարիներին այդ ուղղությանն էին հարում կինոռեժիսոր Վոլֆգանֆ Շտաուդեն, թատերագիր Ֆրեդ Դենգերը և այլոք: Հետպատերազմյա շատ ու շատ անվանի գրողներ, մասնավորապես «47-ի խմբի» անդամները, իրենց համարում են Բորխերտի աշակերտները, ժառանգորդները. նրա գեղարվեստական-գաղափարական հայեցակարգի շարունակողները: Իր «Վոլֆգանգ Բորխերտի ծայնը»³ հոդվածում մեծանուն գերմանացի արձակագիր Հայնրիխ Բյոլը նախ և առաջ կարևորորում է Բորխերտի գրական ժառանգության նշանակությունը, նրան ներկայացնելով որպես հնարավոր նոր պատերազմի դեմ «աիեղ» նախագգզուշացնողի:

Խոսելով Բորխերտի ժառանգորդ գրողների մասին, նախ և առաջ պետք է փաստել. 1950-60-ական թվականներին արևմտագերմանական գրականությունը հակապատերազմական վեպի ժանրում հասավ աննախադեպ մեծ արդյունքի: Առավելապես հենց այս ժանրով գրված ստեղծագործություններն էին, որ համաշխարհային ճանաչում բերեցին գերմանացի կրտսեր սերնդի

² H. Schwitzke. Das Höspiel, Köln-Berlin, 1963, s. 257-258

³ Wolfgang Borchert. Draussen vor Tür und ausgewählte Erzählungen, Hamburg, 1956-1957, s. 135-138

գրողներին, որոնց թվում էին Հայնրիխ Բյուլը, Հանս Վերներ Ռիխտերը, Հերտա Լեդիգը, Կարլ Լյուդվիգ Օպիցը և այլոք: Նրանք բոլորը այն գրողներն են, որոնց գերմանական գրականության մեջ ընդունված է անվանել «վերադարձածների սերունդ», ինչով ակնարկվում է նրանց մասնակցությունը Երկրորդ Համաշխարհային պատերազմին: «Վերադարձածների սերունդը» հանդես էր գալիս ոչ միայն ընդդեմ պատերազմի, այլև ընդդեմ նացիոնալ-սոցիալիզմի: Հենց նման ուղղվածություն ունեւր Վ.Բորխերտի արվեստը, որը ժառանգեցին «47-ի խմբի» անդամները: «Այն, ինչը կազմում էր այն ժամանակվա ապրումների գլխավոր էությունը, - գրում է քննադատ Ֆրիդրիխ Զիբուրգը, - չի համապատասխանում ներկային, քանզի այն ժամանակ խոսքը գնում էր միամիտ (առնվազն պատերազմի առումով) մարդու մասին, որը սարսափելի ցնցված էր իր համար նոր իրականությամբ»:⁴

Գրողները, որոնց մասին խոսում ենք՝ Բորխերտը, Ռիխտերը, Բյուլը, Գրասը, Շնուրեն, Անդերշը, Շալյուքը, Շնաբելն ու այլոք՝ զաղափարական, գեղարվեստական ու գեղագիտական առումով նկատելիորեն տարբերվում են միմյանցից: Տարբերվում են նաև կրոնի հանդեպ իրենց վերաբերմունքով: Այսպես Հ.Բյուլ խորապես հավատացյալ կաթոլիկ էր, սակայն մշտապես սուր քննադատության էր ենթարկում գերմանական կաթոլիցիզմը, քահանաներին ու եպիսկոպոսներին, ովքեր հաճախ գործում են ընդդեմ կրոնի, շահագործում են գերմանացի կաթոլիկների հավատը: Հավատացյալ էր նաև Վ.Բորխերտը: Նրա գեղարվեստական պատկերումներում Աստված ներկայանում է բարի ու մեծահոգի, բայց, միևնույն ժամանակ, որպես անօգնական ծեր մարդ:⁵

«Վերադարձածների սերունդի» ներկայացուցիչները և, մասնավորապես, «47-ի խմբի» անդամները, միակարծիք են պատերազմի մասին իրենց պատկերացումներում: Նրանց ստեղծագործություններում պատերազմը պատկերված է որպես դաժան, անիմաստ ու արյունալի կոտորած, որը հոգեպես ու ֆիզիկապես ոչնչացնում է մարդկանց, նրանց մեջ արթնացնում ամենամռավաստ զգացմունքները, ընազդները:

Պատերազմի արդյունքում հաշմանդամ դարձած Բորխերտի պիեսը նրա հուսահատության, զայրույթի ու բողոքի արտահայտումն էր: Դրանում հեղինակը բարձրացնում է հարցեր, որոնց պատասխանին էին սպասում միլիոնավոր գերմանացիներ, անդրադառնում է ցավոտ թեմաների, որոնք առավել քան արդիական էին նրա ժամանակակիցների համար: Վ.Բորխերտը որպես իր

⁴ Friedrich Sieburg. Nur für Leser. Stuttgart, 1955, s.76

⁵ Wolfgang Borchert. An diesem Dienstag. Hamburg-Stuttgart, 1947, s. 19

պիեսի հերոս է ընտրել «վերադարձածների սերնդի» ներկայացուցիչ՝ կրտսեր սպա Բեկմանին. «նրանցից մեկին, ովքեր գալիս են տուն, և միաժամանակ չեն գալիս, քանզի նրանց համար այլևս տուն չկա»: Նրանց «տունը այնտեղ է՝ փողոցում, փակ դռան առջև. - գրում է Բորխերտը. - նրանց Գերմանիան փողոցում է, գիշերվա մեջ, անձրևի տակ»:⁶

Պիեսի առաջին իսկ էջերից նկատելի է նմանությունը Բորխերտի ու նրա հերոսի միջև: Նրանք սերնդակիցներ են, երկուսն էլ մասնակցել են պատերազմին, դարձել հաշմանդամ, հայտնվել գերության մեջ, պատերազմից վերադառնալուց հետո նրանց երկուսին էլ հետապնդում են սովն ու ցուրտը: Բայց այս նմանությունը թույլ չի տալիս ասել, որ Բեկմանի կերպարը ինքնակենսագրական է, քանի որ պատերազմից հետո նման ճակատագրի արժանացան միլիոնավոր գերմանացիներ:


«Փողոցում, փակ դռան առջև» պիեսում միմյանց են միահյուսվում իրական ու պատրանքայինը, գործողությունները տեղի են ունենում փոփոխական լույսի ներքո, որը համահունչ է Բեկմանի ֆիզիկական ու հոգևոր վիճակին: Իրականն ու թվացյալը այստեղ այնքան մոտ են իրար, որ հաճախ նրանց միջև սահմանագիծը անհետանում է և դժվար է նրանց տարբերել իրարից: Արդեն պիեսի առաջին արարում յուրօրինակ գործող անձ է դառնում Էլբա գետը, ցրտից ու սովից կծկված հերոսը երազում տեսնում է, որ ուզում է վերջ տալ կյանքին՝ նետվել Էլբա գետն ու խեղդվել: Նա այդպես էլ անում է, բայց մատնվում է անհաջողության. նույնիսկ Էլբան է երես թեքել Բեկմանից: Գետը դուրս է նետում նրան իր ջրերից, ստիպելով, որ նա կրկին վերադառնա ետ ու դիմակայի կյանքի դաժան փորձություններին:⁷

Պիեսի երկրորդ մասում հանկարծ Բեկմանի կերպարը երկփեղկվում է ոչ միայն հոգեպես, այլև՝ այլաբանորեն, ֆիզիկապես. հերոսի կողքին հայտնվում է Ուրիշը՝ նրա մշտական ուղեկիցն ու գործընկերը: Ուրիշը, որը ծնվել է հերոսի տանջալի ապրումներից, շփոթվածությունից, հոգևոր ու ֆիզիկական ցավից, զայրույթից ու հուսալքությունից, դառնում է նրա զայթակղիչն ու ընդդիմախոսը, տրամագծորեն հակառակ լույսի տակ է տեսնում աշխարհը, լի է կայուն լավատեսությամբ և ձգտում է հույսը, հավատը, ապրելու ձգտումը փոխանցել հերոսին ու հետ պահել նրան ինքնասպան լինելու սևեռուն մտքից:

Դեռևս 1946 թվականին «Դեր Ռուֆ» ամսագրի 7-րդ համարում հրապարակվեց Գուստավ Զոքեի «Գերմանական գեղագրության, կամ ժամանակակից

⁶ Wolfgang Borchert. Das Gesamtwerk, Hamburg, 1955, s. 122 (358a)

⁷ Նույն տեղում, էջ 139



գրականության փայլն ու թշվառությունը» հոդվածը, որում հեղինակը նախ խոսում է նացիոնալ-սոցիալիզմի օրոք գերմանական գրականության մեջ տիրող իրավիճակի մասին, նշում, որ այս ժամանակաշրջանում «ներքին արտագաղթի» պայմաններում ստեղծագործողները գերադասում էին «մոգական» ոճը, իրենց մտքերն արտահայտում էին քողարկված օգտագործելով խորհրդանշություններն ու այլաբանությունները: Խոստովանելով, որ նացիզմի ու պատերազմի պայմաններում նման գրելավոճը «գոյության» իրավունք ուներ, քանի որ այն թելադրված էր ժամանակի հրամայականով, Յոքեն միաժամանակ քննադատում է այն գրողներին, ովքեր շարունակում են այդ նույն ոճով ստեղծագործել նաև պատերազմից ու նացիզմի տապալումից հետո: Հոդվածագիրը համոզմունք է հայտնում, որ եկել է «նոր իրատեսական գրականության» ժամանակը, որը պետք է արտացոլի հետպատերազմյան գերմանական իրականությունը, որ նոր ժամանակների պահանջն է ոչ թե «գեղագրությունը», այլ իրականության ճշմարտացի պատկերումը. «Տանջանքների դիմաց կանգնած գեղեցկությունը փոխում է իր համաչափությունները: Իրերը տեսնում են այնպես, որպիսին նրանց էությունն է, և այն, ինչ գտնում են ճամփեգրերին ու փլատակներում, անվանում են իրենց անուններով »:

Զնայած Գուստավ Յոքեն ավելի ուշ չմիացավ «47-ի խմբին», նրա անդամները ընդունեցին Յոքեի ծրագրային դրույթները, արձագանքեցին դրան և այն դարձավ հետպատերազմյան Գերմանիայի գրականության առաջին ծրագրային մանիֆեստը: Զարգացնելով Յոքեի տեսակետը, Վ.Բորխերտը գրեց «Ահա մեր մանիֆեստը» (1947) էսսեն: Եվս մեկ տարի անց հրապարակվեց Ալֆրեդ Անդերշի «Գերմանական գրականությունը որոշման առջև» (1948) գրական-քաղաքական ակնարկը, ուր նա շարունակում և զարգացնում է Բորխերտի մտքերը:

«Փողոցում, փակ դռան առջև» պիեսում՝ ներկայացնելով անիրականն ու պատրանքայինը, Վ.Բորխերտը ամենահին էլ չի հակադրվում նոր գրականության հռչակագրին. պիեսում անիրականի տարրերը ներկայանում են իրատեսականի համատեքստում, ստորադասված են իրատեսականին և դառնում են նրա բաղկացուցիչները, նպաստելով իրականության ու հերոսի հոգևոր խռովքի բացահայտմանը:

Բորխերտի հերոսը հայտնվել է փակուղում. նրա առջև վերջնականապես փակվել են բոլոր դռներն ու ճանապարհները: Պիեսը ավարտվում է Բեկմանի

⁸ «Der Ruf. Fine deutsche Nachkriegszeitung» Hrsg. von Hans Schwab-Felisch. München, 1962, s. 203-208

ինքնամոռաց մենախոսությամբ, որում արտացոլված է նրա վիշտը, անօգնական, հուսահատ վիճակն ու անսահման հիասթափությունը:

«Փողոցում, փակ դռան առջև» պիեսը ունի ենթավերնագիր. «Պիես, որը ոչ մի թատրոն չի ցանկանա բեմադրել և ոչ մի հանդիսատես չի ցանկանա դիտել»: Բայց Վ.Բորխերտը սխալվեց. պիեսը բեմադրվեց 1947 թվականի նոյեմբերի 21-ին, հեղինակի մահվան հաջորդ օրը և ջերմությամբ ընդունվեց հանդիսատեսի կողմից: Հետագա տարիներին այն բեմադրվեց աշխարհի տարբեր երկրներում, լայն ճանաչում բերելով վաղամեռիկ հեղինակին:

«Փողոցում, փակ դռան առջև» պիեսից բացի Վ.Բորխերտը հեղինակ է 57 պատմվածքների, որոնք ևս նվիրված են պատերազմին: Դրանց հերոսները՝ նման Բեկմանի, օժտված են «ցածր ծայնով», ամաչկոտ են, երկչոտ: Նրանց մշտապես թվում է, որ իրենք մեղավոր են ինչ-որ հարցում, բայց չգիտեն թե կոնկրետ ինչում:

Մի շարք պատմվածքներում, որոնցից են «Կիրակնօրյա առավոտը», «Մարիան, այդ ամենը Մարիան է», «Հացը», «Մեր փոքրիկ Մոցարտը» Բորխերտը պատերազմը ներկայացնում է անուղղակիորեն, նացիզմի օրոք բանտում հայտնված հերոսների աչքերով: Նրա հերոսները նացիզմի զոհերն են, թույլ ու անօգնական մարդիկ, ովքեր անկարող են դիմակայել պետական դաժան ու անհոգի մեքենային:

Իր կարճատև ստեղծագործական կյանքի ընթացքում Վ.Բորխերտը կարողացավ դնել գերմանական նոր գրականության հիմքերը: Նրա գեղարվեստական ու հրապարակախոսական գործերը դարձան «47-ի խմբի» անդամների համար հզոր խթան, անշեղ ուղեցույց, որով առաջնորդվեցին գերմանական կրտսեր սերնդի ամենանշանավոր գրողները:

The Problem of "comers-back-generation" in the work of Wolfgang Borchert

The famous German writer and playwright Wolfgang Borchert (1921-1947) was a member of post-war literary union – "The Group of 47". He was one of the founders of the new German literature.

The best play of the author – "Outside, behind the door" – was written in January 1947, some months before his death. This article studies the problem of the generation, who came home after the Second World war. We try to analyse the psychological condition of those, who found after returning only ruins instead of their homes. This work laid down a foundation to the new, anti-war trend in the modern German Literature. Borchert has his own political and moral concept of the reasons of this war. It is also an issue of our investigation.